1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 7-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Օրակարգ-7**

**7) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄՀԸ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) հետ համագործակցությամբ նախաձեռնել է «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» (ԻՀԶ) ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը և քաղաքացիակենտրոնությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվելիք գործողությունները միտված են լինելու ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացմանը, տեղական տնտեսական զարգացման խթանմանը և որոշումների կայացման գործընթացներում բնակիչների մասնակցության բարձրացմանը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հուլիսի 2-ի թիվ ԳՍ/14.2/20860-2024 հանձնարարությամբ, համայնքապետարան է ներկայացվել ծրագրի շրջանակներում հայտերի ներկայացման հրավերի և նյութերի փաթեթը:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով և նախատեսվում է համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» (ԻՀԶ) ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:

Միաժամանակ տեղեկացնեմ, որ ծրագրերի իրականցման դեպքում համայնքից պահանջվում է 20 տոկոս ներդրում, իսկ յուրաքնչյուր ծրագրի արժեքը կազմում է 25 հազ. Եվրո:

Քննարկման արդյունքում, քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով

**ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄՀԸ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» (ԻՀԶ) ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:

2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 20 /քսան/ % համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**<u>Օրակարգ-8</u>**

**8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթներով և հիմք է ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին>> N 45-Ա որոշումը:

Որոշմամբ նախատեսվում է հաստատել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի և սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 34-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին>> N 45-Ա որոշումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից կանանց և երիխտասարդների խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելվածները կցվում են արձանագրությանը

<u>**Օրակարգ-9**</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Սիմոնյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և պատասխանեց ավագանու անդամների հարցերին: Զեկուցողը նշեց, որոշմոն ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումը ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N N 1-4 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հավելվածները կցվում են արձանագրությանը:

<u>**Օրակարգ-10**</u>

**10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Խնդրեմ պարոն Խաչատրյան:

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդված 2-րդ մասով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստաված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը>>:

Կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

Կանոնադրությամբ կարգավորվում են քաղաքաշինական գոծունեության իրականացման ընթացակարգերը /Ճարտարապետանախագծային առաջդրանք, նախագիծ, փորձաքննություններ և համաձայնեցումներ, շինարարության /քանդման/ թույլտվություններ, ովարտական փաստաթղթեր, շահագործման թույլտվություններ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն կանոնադրությունում նախատեսվել են դրույթներ համայնքում քաղաքաշինական միջավայրի գեղագիտական հատկանիշների պահպանության ու կատարելագործման՝ ճարտարապետական և լանդշաֆտային ձևավորման, սարքավորումների և այլ տարրերի տեղադրման կամ ձևափոխման, հարդարման նյութերի,

երանգավորման և արտաքին լուսավորության պայմաններին ներկայացվող պահանջներն ու չափորոշիչները:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումը ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդված 2-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստաված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը>>.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքաշինության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը

**<u>Օրակարգ-11</u>**

**11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 82-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը:

Հաշվի առնելով, որ փոփոխություններ են կրել Անի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի նախաձեռնությամբ Անի համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված գերազանց

առաջադիմություն ունեցող աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի վրաստան 3-օրյա շրջագայություն կազմակերպելու և համապատասխան դրամական հատկացում կատարելու մասին>> N 82-Ա որոշմամբ սահմանված գումարի չափը և բյուջեի հոդվածները, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել նշված որոշման մեջ կատարել գումարի չափի և բյուջեի գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների փոփոխություններ:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումը ընդունվեց:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի նախաձեռնությամբ Անի համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի վրաստան 3-օրյա շրջագայություն կազմակերպելու և համապատասխան դրամական հատկացում կատարելու մասին>> N 82-Ա որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<3. Սույն որոշման 1-ին կետում նշված շրջագայությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս՝ 04 /Այլ մշակութային կազմակերպություններ/ և տնտեսագիտական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից հատկացնել 998 000 /ինը հարյուր իննսունութ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

նախատեսված 2.81989 հեկտար մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 08-073-0114-0003/ իրեն վաճառելու մասին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի փետրվարի 8-ի վճիռով /քաղաքացիական գործ՝ N ՇԴ/3732/02/16/՝ քաղաքացի Վարդան Ագունի Սաղաթելյանի սեփականության իրավունքը ճանաչված մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ 3-րդ փողոց, 29/5 հողամաս հասցեում գտնվող արդյունավերական նշանակության շինությունների պահպանման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-073-0114-0003 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության **2.81989** հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ **9 503 030 (ինը միլիոն հինգ հարյուր երեք հազար երկու հարյուր երեսուն)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Վարդան Ագունի Սաղաթելյանին (անձնագիր՝ AV 0519180, տրված՝ 15.11.2022 թվականին, 022-ի կողմից, հաշվառման հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 3-րդ փողոց, տուն 5, հետագայում՝ Գնորդ):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Հովհաննես Վանյայի Հովհաննիսյանի հետ /այսուհետև՝ քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ Գնորդի միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

**<u>Օրակարգ-15</u>**

**15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 4 ՇԵՆՔԻ 25 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՋԻՎԱՆ ԱԶԱՏԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՎԵՑ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Ջիվան Ազատի Մալխասյանը՝ Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 4 շենքի թիվ 25 չորս սենյականոց բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0026-0060-007-025, Վկայական՝ N 02072024-08-0039/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իր 6 անձից բաղկացած ընտանիքին նվիրել խնդրանքով: Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել <<Հայաստանի ազգային արխիվ>>

պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության 06.02.2024 թ N Մր-35 արխիվային տեղեկանքը, համաձայն որի Անիի շրջխորհրդի գործկոմի 1986 թվականի նոյեմբերի 21 թիվ 12 արձանագրության որոշման համաձայն Մարալիկ քաղաքի 2-րդ բնակ. թաղամասի, թիվ 4 շենքի, թիվ 25 չորս սենյականոց բնակարանը Ջիվան Ազատի Մալխասյանի 6 անձից բաղկացած ընտանիքին հատկացնելու մասին:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հաշվի է առնվել այն, որ Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 4 շենքի 25 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումը ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 4 ՇԵՆՔԻ 25 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՋԻՎԱՆ ԱԶԱՏԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՎԵՑ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 4 շենքի 25 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության 06.02.2024 թ N Մր-35 արխիվային տեղեկանքը, համաձայն որի Անիի շրջխորհրդի գործկոմի 1986 թվականի նոյեմբերի 21 թիվ 12 արձանագրության որոշման համաձայն Մարալիկ քաղաքի 2-րդ բնակ. թաղամասի, թիվ 4 շենքի, թիվ 25 չորս սենյականոց բնակարանը Ջիվան Ազատի Մալխասյանի 6 անձից բաղկացած հատկացնելու մասին, հաշվի առնելով քաղաքացի Ջիվան Ազատի Մալխասյանի 2024 թվականի մայիսի 24-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը

հանդիսացող Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 4 շենքի թիվ 25 չորս սենյականոց բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0026-0060-007-025, Վկայական՝ N 02072024-08-0039/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Ջիվան Ազատի Մալխասյանի /անձնագիր՝ AT0469543, տրված՝ 01.10.2019թ. 022-ի կողմից, հետագայում՝ Նվիրառու/ 6 անձից բաղկացած ընտանիքին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-16</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հարություն Համբարյան/

Զեկուցողը հիմնավորեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 1 հավելվածում լրացում և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը որով նախատեսվում է՝

ա) որոշման N 1 հավելվածի աղյուսակի 22-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 23-րդ կետ հետևյալ խմբագրությամբ՝

| **հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 23 | Ձիթհանքով մշակույթի տան պատասխանատու | **1** | **104 000** | **1** | **104 000** |

դ) Վերջին՝ <<**ԸՆԴԱՄԵՆԸ**>> տողի 3-րդ սյունակում նշված <<23>> թիվը փոխարինել <<24>> թվով, 4-րդ սյունակում նշված <<**2 502 000**>> թիվը փոխարինել <<**2606000**>> թվով,

5-րդ սյունակում նշված <<23>> թիվը փոխարինել <<24>> թվով, իսկ 6-րդ սյունակում նշված **<<2 583 000**>> թիվը փոխարինել **<<2687000>>** թվով:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդված 1-ին մասի, 34-րդ հեդվածի 1-4-րդ մասերի դրույթներով.

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումը ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդված 1-ին մասի, 34-րդ հեդվածի 1-4-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

ա) որոշման N 1 հավելվածի աղյուսակի 22-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 23-րդ կետ հետևյալ խմբագրությամբ՝

| **հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 23 | Ձիթհանքով մշակույթի տան պատասխանատու | **1** | **104 000** | **1** | **104 000** |

դ) Վերջին՝ <<**ԸՆԴԱՄԵՆԸ**>> տողի 3-րդ սյունակում նշված <<23>> թիվը փոխարինել <<24>> թվով, 4-րդ սյունակում նշված <<**2 502 000**>> թիվը փոխարինել <<**2606000**>> թվով, 5-րդ սյունակում նշված <<23>> թիվը փոխարինել <<24>> թվով, իսկ 6-րդ սյունակում նշված **<<2 583 000**>> թիվը փոխարինել **<<2687000>>** թվով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու

արտահերթ նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնեց նիստի մասնակցության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ- 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Է. ՌՒՌՈՒՏՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| **Մ. ԵՆՈՔՅԱՆ** | __________ | __________ | __________ |
| | | | __________ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<30>> օգոստոսի 2024 թ.
քաղաք Մարալիկ

**Արձանագրեց՝**
**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝**
**Հ. Համբարյանը** __________

<<30>> օգոստոսի 2024 թ.
քաղաք Մարալիկ